

ՆԱՍՏԻԿ ԿԱՐԱԳՈՒԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ «ՀԱՐԱԼԵԶՆԵՐՈՒ ԴԱՎԱԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐԸ

«Չարաշուք թափահարումներով չաստվածները ճամփա կելլեն մութին մեջ, արշալույսեն առաջ ու կմեկնին: Հարալեզները կդավաճանեն ու կմեկնեն: Մինչև մեր երեսուն տարիներում մոտերը կկարծենիք բարձրանալ, հակառակ մեր վստահության կկարծենիք համբառնալ, մարմնեղենը ետև ձգել ու վեր ելլել, հասնիլ արշալույսին: Եվ ահա դավաճանությունը՝ ու կզգանք թե շատ մը բաներ կանգ կառնեն: Հարալեզները կլիզեն ու Գեղեցիկը պիտի արթնանար: Բայց ան այլևս պիտի չելլեն ոտքի»:

(Շահան Շահնուր)

Ֆրանսահայ արձակույմ Շահան Շահնուրն առանձնանում է ինքնատիպ տաղանդով և թողած նշանակալից հետագծով: Սփյուռքի ձևավորման առաջին իսկ օրերից նա դարձավ «Նահանջի» դեմ անխոնջ մարտիկը: Ֆրանսահայ երիտասարդ արձակագիրը ցավով նկատեց, թե ինչպես ժամանակի գործոնները հեռացնում են հային ազգային խնդիրներից, ինչպես են օտար բարքերը և կենցաղն աստիճանաբար դառնում բնական կենսաձև, ինչպես է աղճատվում և օտարվում մայրենին:

«Շահան Շահնուր իր գրիչը թաթախեց մեր ժողովուրդին տառապանքին, իր իսկ տառապանքին մեջ ու գրեց, գրեց անիծելով, ոչ ուրանալով ինչպես ոմանք հետեւեցուցին, գրում է Թորոս Թորանյանը,- գրեց արիւնելով իր եւ ուրիշներուն հոգին, մտածելով թե այդ է ձեռը տառապանքէն թմբած հոգիները արթնցնելու, հարուածեց ու հարուածուեցաւ, բայց մահուան սեմին անգամ ցած չդրաւ իր գրող մարտիկի գրիչը, իր բոցավառ հայրենասէրի գրիչը»¹:

Շահան Շահնուրի հարաճում, ազգային դիմորոշ դարձող հարցադրումներին են արձագանքում «Նահանջ առանց երգի» (1929) վեպը և «Հարալեզներու դավաճանությունը» (1933) պատմվածաշարը:

«Նահանջ առանց երգի» վեպի լույսընծայումից չորս տարի անց գրողը հրատարակեց իր պատմվածքների անդրամիկ ժողովածուն՝ «Հարալեզներու դավաճանությունը», որն արժանացավ ընթերցողների և քննադատների բարձր գնահատականին:

«Հարալեզներու դավաճանութիւնը»,- գրում է Արշակ Չոպանյանը,- թանկագին հատոր մըն է, ուր «Նահանջ առանց երգի» վեպին տաղանդաւոր հեղինակը կը յայտնուի աւելի եւս խտացած, զտուած, սուրցած արուեստով մը»²:

Ֆրանսահայ գրողը պատմվածաշարը ձոնել է իր լավագույն ընկերոջը՝ գրող-հրապարակախոս Հարություն Ֆրենկյանին:

¹ Թորոս Թորանյան, Վերստին կարդալով Շահան Շահնուրը, Հալեպ, 1971, էջ 11:

² «Անահիտ», Փարիզ, 1933, թիվ 3-4, էջ 80:

Պատմվածաշարի մեջ են մտնում յոթ պատմվածքներ՝ «Առավոտյան շեփոր», «Հոսանքին երգը», «Մանուկ մը տարեցներուն մեջ», «Դերձակ մը, իր երկու հյուրերը և զանազան դէպքեր», «Զաթոսթե», «Պճեղ մը անուշ սիրտ» և «Հարալեզներու դավաճանությունը», որոնք պատկերում են հայի երեկվա և այսօրվա կյանքը՝ իր հոգսերով ու տագնապներով:

«Նորավելները» հավաստում է Արշակ Չոպանյանը, հեղինակին ծննդավայր Պոլսին մէջ երեկուան ու մանաւանդ հեռաւոր օտարութեան մէջ այսօրուան՝ թրքահայ կեանքի պատկերներ են քմայքոտ երգիծանքի սրտագէտ, չարաճճի ու կենդանի մկարումով մը իրականացած:

Պատմվածաշարի երեք պատմվածքները մերկայացնում են դարասկզբի պոլսահայ կյանքը՝ իր անհամագոյություններով և մտահոգություններով: Ի տարբերություն վազգեն Օուշանյանի և Օավարշ Նարդունու, Օահան Օահնուրն անցյալը չի գումազարդել: Նրա պատկերած անցյալ կյանքն իրական կյանքն է՝ իր բնական ընթացքով, սովորական մարդկային հարաբերություններով: «Բացառիկ արիություն» գրում է Ա. Թոփչյանը, բյուրեղյա խիղճ և անսահման մեծ սիրտ պետք է ունենալ սեփական ժողովրդին, ծանր և դժվարին պահերին դառը, բայց սթափեցնող ու անհրաժեշտ խոսքեր ասելու համար»³: Միտումնավոր կերպով երիտասարդ գրողն իր պատմվածքների մյուս է դարձրել ինչպես պոլսահայ, այնպես էլ փարիզահայ կյանքը՝ ընդգծելու համար հայի դժվարություններով ու փորձություններով հարուստ կյանքը: Պոլսահայ կյանքի պատկերումը մախադոտ է հանդիսացել փարիզահայ կյանքը պատկերելու համար: Եվ դա, մեր կարծիքով, հաջողվել է գրողին:

«Հարալեզներու դավաճանությունը» պատմվածաշարը բացվում է «Առավոտյան շեփորով», որի թեման Ավետիսի և Աղավմիի սիրո գողտրիկ պատմությունն է: Թվում է՝ ոչ ոք և ոչինչ խոչընդոտ չի կարող հանդիսանալ այս մեծ սիրուն: Սակայն տխուր մի միջադեպ խորտակում է այդ սերը: Այդ միջադեպի բացահայտումով էլ Օահնուրը մերկայացնում է թուրքական բանակի խժոժությունները, մրա ծանր վիճակը, անոթի զինվորների կյանքը, ինչպես նաև օսմանյան բանակի դաժան անմարդկային օրենքները: Ավետիսը, որ զինվորական խոհանոցի աշխատող էր, զարման մի երեկո, անչափ անոթի լինելով, գաղտնի մի մեծ մսի կտոր է առնում բերանը, սակայն տեսնելով մերս մտնող ենթասպային՝ փորձում է թաքցնել գողացած մսապատառը կուլ տալով՝ դաժան և մաստաղացող պատժից խուսափելու համար: Սակայն չարաբաստիկ այդ պատառը կանգնում է կոկորդին, և մա հրաշքով է փրկվում մահվան ճիրաններից: Թուրք բեյի կարգադրությամբ մրան դաժանորեն ծեծի են ենթարկում, ավելին՝ ստիպում են կատարել սեփական անձը ստորացնող արարքներ:

Օահնուրի հերոսները սովորական մարդիկ են, սովորական մի միջադեպը գրողի գրչի տակ վերածվում է գեղարվեստական պատկերի: Օահնուրը գրում է իր տեսածի, զգացածի մասին, մտացածին ոչինչ չի գրում: Այդ է թերևս պատճառը, որ մրա կերտած հերոսներն իրական են և կենդանի:

«Օահնուր» հավաստում է Արշակ Չոպանյանը, իր գործերում մէջ ընդհանրապես հասարակ տիպարներ, հասարակ դէպքեր կ'առնէ իրեն միւս, եւ կը յաջողի՝ իր տարօրի-

³ Ալեքսանդր Թոփչյան, Ապագայի մերկայությամբ, Երևան, 1987, էջ 220:

նակ տաղանդին շնորհիւ՝ այդ լաճախ անճշան դէպքերն ու մարդիկը բարձրացնել մինչեւ տոսամ, մինչեւ նոյն իսկ տեսակ մը դիւցազներգութիւն»⁴:

«Հարալեզներու դավաճանութիւնը» ժողովածոյի պատմվածքները միագիծ չեն: Ծանուորն այստեղ երբեմն երգիծական հմտությամբ ներկայացնում է կյանքի զավեշտական կողմերը և լիաթոք ծիծաղում իր հերոսների վրա: Նա օժտված է երգիծական տեսողությամբ: Կյանքի դրամատիկ երևույթների ու հոգեկան աշխարհի քննությանը զուգընթաց զորողը շարունակում է Ե. Օսյանի գեղարվեստական փորձը, սակայն միանգամից ասեմք, որ այն տիրապետող հատկանիշ չդարձավ Ծահնուրի երկերում:

Պոլսահայ կյանքն է պատկերված «Հոսանքին եզրը» և «Մանուկ մը տարեցիներու մեջ» պատմվածքներում: Վերջինիս հիմքում ընկած է Ալեմտաղցի կնոջ և Սրապիոնի պատմությունը՝ ներկայացված տեղական, կենցաղային գույներով: Նրանք կողք կողքի հարևաններ են, սակայն անհաշտ են. անվերջ կոիվ, խոտվություն, հայհոյանք, անեծք: Երկու հարևանների համար կյանքը դարձել է դժոխք, անտանելի օրերի անվերջանալի շարան: Եվ դրանից բավականություն են ստանում դրացիները՝ անընդհատ բորբոքելով չմարող վեճը: Ի վերջո, տարեց հարևանները գիտակցում են այն և հաշվեհարդար տեսնում նրանց դեմ, ովքեր հրճվանք են ապրում իրենց այս վեճերի համար: Եվ սա պոլսահայ կյանքն է՝ իր մանր ու մեծ հոգսերով, զավեշտական պատմություններով, ուր սակայն չկա նահանգի վտանգը:

Ծահնուրն իր մյուս պատմվածքներում արդեն պատկերում է փարիզահայ կյանքը՝ իր տազնապներով, ուծացմամբ և նահանջով:

«Դերձակ մը և իր երկու հյուրերը և զանազան դեպքեր» պատմվածքը երիտասարդ դերձակ Տիրամի, նրա տարեց վարպետի՝ Տագես Պալապանյանի դառնություններով լի կյանքի պատմությունն է: Մեծ արհավիրքից հետո նրանք շատերի մեծ ապաստան են գտել Փարիզում, ուր բարքերն ու սովորություններն այլ են:

Տիրամը կարճ ժամանակահատվածում ընտելանում է օտար բարքերին և հաճախ տրվում է հարաճուն հաճույքներին, իսկ ահա նրա վարպետը՝ Տագես Պալապանյանը, ոչ մի կերպ չի ցանկանում հաշտվել փարիզյան բարքերի հետ: Նա ջանում է ընտանիքն ու աղջկան գերծ պահել մորի հրապույրներից: Սակայն աղջիկը՝ Ալիսը, որն ունի ազատ վարքագիծ, հակադրվում է հորը՝ ընդունելով գայթակղող մորը: Ծահնուրը սրությամբ է ընդգծում երեցների և կրտսերների բախումը: Երեցները չեն ցանկանում ապրել մոր ձևով, բայց և չեն կարողանում ապրել հին ձևով՝ իրենց ազգային ավանդապաշտ կյանքով, իսկ կրտսերները պարզապես չեն ցանկանում ապրել հին ձևով՝ դյուրությամբ ընդունելով մորը: Ահա այս ողբերգության հասնող հակասությունն է ընկած պատումի հիմքում:

Տագեսն իր փրկությունը, փախուստն այլանդակող մորից տեսնում է Պոլիս վերադարձի մեջ: Նրան թվում է, թե այդ ձևով ինքը կկարողանա պահպանել իր ազգայինը: Անցյալն այն ելակետն է, այն հողը, որը չնայած կորել է ոտքի տակից, բայց իր հարաբերություններով և բարոյական արժեքներով, իսկ ամենակարևորը՝ իր իդեալներով պարզ էր, հասկանալի և հարազատ: Նա խոր վիշտ է ապրում, երբ գիտակցում է, որ ետդարձ ճանապարհ չկա, և ուծացումն ու նահանջը անխուսափելի է: Գաղթական հայը չափազանց դժվարությամբ, բարոյական գերլարման գնով կարողանում է ընդհանուր եզրեր

⁴ «Ամառիտ», Փարիզ, 1933, թիվ 3-4, էջ 80:

գտնել հին (Պոլիս) և նոր (Փարիզ) իրականությունների միջև: Ուշագրավ է պատմվածքի ավարտը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մահանքի գույժ. «Սկսավ երգել «Տէր ողորմեան», արեւվարտը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մահանքի գույժ. «Սկսավ երգել «Տէր ողորմեան», արեւվարտը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մահանքի գույժ. «Սկսավ երգել «Տէր ողորմեան» է, որ լավագին խոր հուզումով: Վարպետը չէր լար իր անկումի համար: - «Տէր ողորմեան» է, որ լավագին է: Վարպետը չէր աղաչեր կյանքեն, երիտասարդներեն - «Տէր ողորմեան» է, որ պաղատագին է: Խոր արցունքներ կային, բայց հիմնած կոկորդն է հանցալիոր: Տիրամն ալ հետեւեցավ մարդուն և բնավ չնայեցան իրարու...»⁵:

Ծափնուրի պատմվածաշարի լավագույն ստեղծագործություններից է «Պճեղ մը անուշ սիրտը», որի մասին Գեղամ Սևանը գրում է. «Սփյուռքահայ գրականության դասականի իրավունքը մվաճած պատմվածքներից է, զարմանալի իրագործումներից մեկը և բարեբախտաբար ոչ եզակին»⁶:

Ֆրանսահայ գրողն ինչպես իր նախորդ պատմվածքներում, այստեղ ևս պատկերում է հայի դժվարին կյանքը, իր տեղը չգտած մարդու ողբերգությունը, հայ մարդու, հայ երիտասարդի առանց երգի մահանքը: Նահանջում են բոլորը, սակայն ամեն մեկը յուրովի: Այսպես՝ Եպրաքեն հանումի որդիները լքում են մորը. մեկը նոր միջավայրում հեռանալով մորից, ազգայինից, նորովի է սկսում իր կյանքը, մյուսը, որը ապականող նորի հակառակորդն է, չգտնելով պայքարի ուղի, չտեսնելով մահանքին դիմակայելու ոչ մի շող, ինքնասպանություն է գործում՝ հանրակառքի անիվների տակ կնքելով իր մահկանացուն, անձնասպանության է դիմում նաև մեկ այլ երիտասարդ հայորդի՝ Նորիկ Կարապետյանը:

Պատմվածքի առանցքը հայ մայրն է՝ Եպրաքեն հանումը, որը մայրական սիրով և անթաքնույց ջերմությամբ է լցնում պատմվածքը: Նա «պճեղ մը անուշ սիրտ» է, նրա համար ամեն մի հայ երիտասարդ իր հարազատ զավակն է, նա ցավում է յուրաքանչյուրի համար և յուրաքանչյուրին պատում է իր մայրական անկեղծ սիրով: Եպրաքեն հանումը մեծ ողբերգություն է ասկում, երբ իմանում է, որ Նորիկ Կարապետյանն անձնասպանություն է գործել, և չի կարողանում հասկանալ, թե ինչու են հայ երիտասարդներն այդ քայլին դիմում, չէ որ դեռ երիտասարդ են, կարող են ապրել, սիրել: Պատմվածքը հարցադրումների մի ամբողջ շարք է՝ ուղղված մահանքի և ուժացման դեմ: Նահանջում են բոլորը, տարբեր են մահանքի ճանապարհները, սակայն վախճանը մեկն է՝ մահանք, այն էլ՝ առանց երգի:

Ծափնուրն իր պատմվածքներում արտացոլում է տեսածն ու ապրածը: Լինելով իրապաշտ գրող՝ նա, սակայն, ազդվել է եվրոպական մշակույթի նորագույն ուղղություններից և հատկապես գոյափիլիսոփայական ուղղությունից:

Սփյուռքահայ գրականության մեջ գոյափիլիսոփայական որոնումների ենք հանդիպում 20-30-ական թթ. գրողների՝ Վ. Շուշանյանի, Ջ. Որբունու, Հ. Զարդարյանի, Ծ. Ծափնուրի ստեղծագործություններում: Փիլիսոփայական ուղղության որոշ ներթափանցումը հայ գրականությունն առաջին հերթին բացատրվում է Սփյուռքի անօրինակ ծանր վիճակով, նրա հանդեպ իրատես տազնապով: Ֆրանսահայ գրողները ելնում էին ազգային ճակատագրի հանդեպ մտահոգությունից: Նրանք առավելապես որոնում էին գոյության փիլիսոփայական խորհուրդը, որը մի սահման է, որ ներառում է ազատ կյանքը և պատասխանատվությունը հավաքական ազատ մղումների հանդեպ, ինչի տակ պետք է միա-

⁵ Ծափնուր Ծափնուր, Երկեր, հատոր առաջին, էջ 254:

⁶ Գեղամ Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 177:

վորել մաս անհատի անընկճելիությունը, տատապանքի վեհությունը, դիմակայելու ուժը, հատկանիշներ, որ տեսնում են իրենց ժողովրդի մոր, դժվարին կյանքի մեջ:

«Զաթոսթե» պատմվածքը գրված է գոյապաշտական սկզբունքների հետևողությամբ, որտեղ, սակայն, պահպանվում է իրատեսական հատիկը, այն լրացնում է ֆրանսաֆայ կյանքը պատկերող պատմվածքների շարքը: Ծաֆնուրի այս ստեղծագործությունը պլոտը տրվում է «ապրելու պարտադրությամբ» բանաձևի շուրջ, որին գրողը մոտենում է երկու մեկնակետով, մախ՝ փիլիսոփայական հայեցողությամբ, ապա՝ ազգային ճակատագրի մտահոգությամբ: Պատմվածքի հիմքում ընկած է մարդու միայնության, առանձնության, մահվան դատապարտվածությանը վերաբերվող հարցերը: Սյուժեի ընձեռած սեղմ հնարավորություններում Ծաֆնուրն իրեն դրսևորել է հոգեբանական խորաթափանց վերլուծական կարողությամբ, մերապրումի համընդգրկուն բացահայտումով:

Պատմվածքի դեպքերը տեղի են ունենում մարդկանց կողմից արհամարհված, լքված «Զաթոսթե» բուժարանում: Պատմվածքի հերոսն է հայ սափրիչ Միշելը, հաճախ նրա, սակայն, դժվար չէ ճանաչել հեղինակին: Այս քայլին դիմում են շատ գրողներ, երբ ցանկություն ունեն վերականգնել իրենց կյանքի դեպքերն ուրիշի անվան տակ: Դա մպաստում է պատմվածքի անկեղծությանը:

Պատմվածքի հիմքում երիտասարդ հերոսի հիվանդանոցային կյանքի պատմությունն է, նրա սիրո, կրած պարտությունների, տարած հաղթանակների պատմությունը: Միշելի կյանքը հարուստ չէ արտաքին իրադարձություններով, սակայն նրա մերաշխարհը, հոգեբանական տեղաշարժերը հավաստի ու պատկերավոր են: Բուժարանում կյանքը ձանձրալի ու տաղտկալի է, սակայն մեծության և լքվածության դատապարտված հերոսները ստեղծում են իրենց փոքրիկ երջանիկ անկյունը, իրենց անխաբ միասնությամբ առօրյան դարձնում հետաքրքիր:

Միայնության և օտարացվածության, գլխավորապես մահվան դեմ, որն օրական խլում է կյանքեր, նրանք պայքարում են միմյանց մկատմամբ տաժած պարզ և մեծ սիրով, հարգանքով ու վստահությամբ: Այստեղ՝ բուժարանի մոպս պատերի մեջ, շնորհիվ իրենց, տիրում է ջերմ և բավականին հաճելի մթնոլորտ: Այստեղ՝ աշխարհից կտրված, արհամարհված «Զաթոսթե» բուժարանում, բժշկվում են տարբեր ազգերի մարդիկ, սակայն սա չի խանգարում, որ նրանք ստեղծեն իրենց երջանիկ անկյունը: Պատումի հիմքում ընկած է հայ Միշելի և ֆրանսուհի Ֆաննի սերը, որը կյանքից հիասթափված հերոսների հոգում սեր է արթնացնում դեպի կյանքը, նրանց մղում պայքարի՝ ընդդեմ օտարացվածության և միայնության, ընդդեմ մահվան:

Հերոսների համար հավերժական սիրո դիմաց մահն այլևս սարսափելի չէ: Իրենց գոյության խորհուրդը Ծաֆնուրի հերոսները տեսնում են ապրելու, ուրիշին մեցուկ լինելու մեջ: Նրանք ընդվզում են մահվան դեմ՝ իրենց անխաբ միասնությամբ, թեև գիտակցում են նրա անխուսափելիությունը: Ծաֆնուրը չի բավարարվում միայն մարդկային հարաբերություններ պատկերելով, նա մաս մտահոգված է իր ազգի ճակատագրով և վաղվա օրով, և այդ վաղվա օրը կապում է Մայր Հայաստանի հետ: Պատմվածքն ունի փոխաբերական և խորը խոհափիլիսոփայական իմաստ: Հաճախ հերոսուհի Պիաթրիսի, որը պատմվածքի հոգեբանական վառ կերպարներից է, գրողը ներկայացնում է օտարության քառուղիներում հայտնված զաղթահայտությանը, որի առջև գոց են իր տան դռները:

Ծահնուրի իղձն է՝ բոլոր տարագիրներին տեսնել Մայր Հայրենիքում. «հոգեկան հայրենիքը» վերածել իսկական հայրենիքի. «Իմ փափագս է հոն երթալ,- գրում է Ծ. Ծահնուրը,- իմիցաներուս մոտ, խմբովին»⁷:

Պատմվածաշարը եզրափակվում է «Հարալեզներու դավաճանությունը» ստեղծագործությամբ, ուր Ծահնուրը սրությամբ է հնչեցնում մահաճշի անխուսափելիության զաղափարը: Այն, ինչպես «Զաթութե» պատմվածքը, ունի գոյափիլիսոփայական խորք:

«Հաւաքածուին կարեւորագոյն երզը՝ վերջինն է,- գրում է Արշակ Չոպանյանը,- որուն տիտղոսը տուած է ամբողջ հատորին: Թուրքահայութեան ահաւոր փլուզումէն յետոյ՝ օտար երկիրներ տարազնուած անոր մնացորդներուն, մանաւանդ երիտասարդներուն, օտար միջավայրէ կլանման վտանգին հանդէպ զգացուած վրդովմունքի, վախի, տրտմութեան, ընդվզման հոգեկան փոթորիկն է որ կ'արտայայտուի հոդ՝ խոր յուզմունքով մը, մեծապէս ու հզորապէս ինքնատիպ ոճի մը մէջ: Տոսմն է իրենց բնիկ հողէն արմատախիլ եղած այն դէտատի Հայերուն, զոր ամէն օտար հող կը ձգտի իւրացնել, որ չեն ուզեր այլափոխուիլ ու կորսուիլ, բայց որ – չըմբռնելով թէ խորհր. Հայաստանը միակ փրկութեան մահաճգիստն է,- անտուգութեան ալեկոծ ծովուն մէջ կը թափառին եւ շուարած, խելայեղ կը զալարուին, իրենց յոյսի ու երագի ճիգերուն մէջ միշտ պարտուած»⁸:

Պատմվածքը երիտասարդ գրող Համբարձումի գերքին մենախոսությունն է: Այստեղ գործողությունները նկատելիորեն զիջում են հոգեբանական հետախուզումներին: Կարելի է ասել՝ պատմվածքը հոգեբանական մի փոքրիկ էություն է: Պատումը հյուսված է հերոսի հետահայց զգացումների, գործողությունների, հիշատակների ոգեկոչման միջոցով: Պատմվածքի սյուժետային զարգացումն անցյալի ու ներկայի համադրված քննությունն է՝ բացված հերոսի գերքին տեսողությամբ: Դիպաշարի ընձեռած սեղմ, սահմանափակ իր հնարավորություններում Ծահնուրն իրեն դրսևորում է հոգեբանական խորաթափանց վերլուծական կարողությամբ, ներաշխարհի համընդգրկուն բացահայտումով: Նա երևան է բերում անհատի հոգևոր նկարագրի լիությունը, ապրած կյանքի փիլիսոփայական իմաստավորումը, և դա այն դեպքում, երբ նրա հարազատները, անգամ նրա հեթանոս աստվածներն անհաղորդ են մնում նրա ներաշխարհի լույսերին, չեն պատկերացնում նրա զգացմունքների «տիեզերական» խորությունը: Դաժան ու անզուրկ հարված է սա: Ազգային հեռանալու տրամադրությունն այլևս հեռանկար չէ, այլ իրական ծրագիր, որն ուր որ է՝ գործողության կորվի, ու վերջ ազգայինին: «Ընդունեցավ իր տկարությունը, իր ուժացումը ու սուտը, քանի որ հարալեզները դավաճանած էին և ինք պարզապես մարդ էր, ինչպես ես, ինչպես դու»⁹:

Լքվածությունը, առանձնությունը նոր-նոր է բացահայտում անցյալում պատահած դժբախտության հոգեսահմանը: Հերոսը խորությամբ հասկանում է, որ եղեռնը դեռ ողբերգության վերջին կետը չէ, որ այն շարունակվում է լքումով, ուժացմամբ և մահաճշով, որից մինչև կործանում, հոգևոր թե ֆիզիկական վախճան, ընդամենը մեկ փոքրիկ քայլ է: Հերոսի դատողությունները լցված են ցավի անթաքույց մեկնումով: Մեռության, լքումի զգացումը միջավայրի թողած «նստվածքներն» են: Իր օտարության, օտարացվածության

⁷ Ծահն Ծահնուր, Երկեր, հատոր առաջին, էջ 274:

⁸ «Ամառիտ», Փարիզ, 1933, թիվ 3-4, էջ 80:

⁹ Ծահն Ծահնուր, Երկեր, հատոր առաջին, էջ 304:

խնդիրը հերոսը փորձում է լուծել՝ ոգեկոչելով իր հեթանոս աստվածներին: Ծափնուրի երիտասարդ հերոսը զարմանալի հապճեպ կողմնորոշումով փորձում է մոր հույս վառել հուսաբեկ իր սրտում: Եվ այդ մոր հույսը հարալեզներն են՝ հեթանոս աստվածները, որոնք մոր ուժ և կորով պետք է հաղորդեն հերոսին՝ դիմակայելու մահանջին¹⁰:

Հերոսի հույսն աղոտ է և գնալով մարում է: Ինքնամիջադատությունը, կամքը, ինքնատիրապետման հավատը պարզապես հոգու առաջին ենթագիտակցական արձագանքն են, որ որոշ ժամանակ անց բեկվում է: Չէ որ մարդու դիմակայությունն էլ իր վերջնագիծն ունի. կամային-զգացմունքային լարվածության սահմանը: Նա, ինչպես հազարավոր հայորդիներ, ևս մահանում է, օտարվում հայությունից: «Համբարձումին համար անհրաժեշտ էր հեռանալ վատառողջեն, ազգայինեն, հայեն: Պետք էր լքել հայը: Որքան ատեն որ կըսեր, սեր չկա մեր մեջ, այսինքն հայը իր ազգակիցը չի սիրեր, որքան ատեն որ հայը իր ազգային փրկությանը մասին այլևս հույս չունի և ատով իսկ ոչինչ կընե, պետք է հեռանալ հայեն: Քանի որ ինք փրկությունը կտեսներ սիրո և հույսի մեջ...»¹¹:

Հերոսի վերջին «սեր, հույս» բառերը ոչ այնքան սրտաբուխ, առարկայական լավատեսություն են, որքան, մեր կարծիքով, գոյության խորհուրդը պարզող պատգամ, խարոսխված քրիստոնեության հույս, սեր և հավատ հիմնարար հասկացության վրա, որը, ըստ երևույթին, դուրս է գալիս անձնականի ընդգրկում ոլորտից և ներառում Սփյուռքի գոյության մերհակ, առանցքային խնդիրները: Իսկ տարաշխարհիկ գրեթե բոլոր հորիզոններում ազգայինի պահպանման բնագոյն անդառնալիորեն շարունակում է իր մահանջը. հայը և հայկականը լուծվում են օտար միջավայրին, խորթ գաղափարներին, լեզուներին՝ ի շահ հասարակական կեցության, սոսկ գոյության բարեկեցության, որի մեջ ազգային պահպանողականությունն ուղղակի «խանգարիչ» հանգամանք է: Սփյուռքի անհեռանկարայնությունը, մրա վաղ թե ուշ մահվան գաղափարը, որ միշտ Ծափնուրի ազգային-հասարակական մտածումների կենտրոնում է եղել, անցնում է մի ստեղծագործությունից մյուսը՝ դառնալով շիկացման ազդակ, տարողունակ հարցադրում, ելակետային հայացք:

¹⁰ Տե՛ս մույն տեղում, էջ 304:

¹¹ Նույն տեղում, էջ 304: